ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ VI—XIII ԴԴ.

(Ըստ ապակեգործական տվյալների)

Հայաստանը իր գրված աշխարհագրական դիրքի շնորհիվ կարևոր դեր էր խաղում Առաջավոր Ասիայի քաղաքական և տնտեսական կյանքում։ Ֆեոդալական հարաբերությունների ձևավորման և զարգացման շրջանում, հատկապես ապրանքային արտադրության աճի պայմաններում, ընդլայնվեցին Հայաստանի տնտեսական կապերը տարբեր երկրների հետ։ Հայկական բարձրավանդակով էին անցնում ստրատեգիական և առևտրական կարևոր ուղիները, որոնք կապում էին Արևելքը Արևմուտքի և Հարավը Հյուսիսի հետ։ Երկրի տնտեսական և մշակութային կյանքի զարգացումը ինչ-որ չափով կապվում էր նաև միջազգային տարանցիկ առևտրի, առևտրական ճանապարհների ուղղություններ և նրանց ինտենսիվության աստիճանի հետ։ Հայերը ակտիվ մասնակցում էին այդ առևտրին՝ արտահանելով գյուղատնտեսական և անասնապահական մթերքներ, բնական հանքային հարստություններ և հատկապես բարձր ճաշակով պատրաստված արհեստագործական արտադրանք։

Մերձավոր արևելքից, Բյուզանդիայից, Հեռավոր արևելքից, հյուսիսից Հայաստան էին ներմուծվում համեմունքներ, անուշահոտ յուղեր, չինական մետաքս, մորթեղեն, կենցաղային տարբեր առարկաներ, այդ թվում խեցեղեն և ապակեղեն։

Ապակեգործությունը Մերձավոր արևելքում և Բյուզանդիայում միջին դարերում բուռն զարգացում էր ապրում և շատ բնական է, որ այն միջազգային առևտրում դարձավ փոխանակության կարևոր մասերից մեկը։ Այդ են ցույց տալիս Հայաստանի խոշորագույն քաղաքների՝ Անիի և Դվինի պեղումները։ Չնայած Հայաստանը հայտնի էր իր արհեստագործական արտադրանքով, որի մեջ կարևոր ճյուղերից մեկը ապակեգործությունն էր, այնուամենայնիվ ներմուծված ապրանքների թվում զգալի քանակ էին կազմում Եգիպտոսի, Ասորիքի, Իրաքի, Իրանի, Բյուզանդիայի հռչակված արհեստանոցներում պատրաստած ապակե անոթները։ Ներկա աշխատանքի նպատակն է տարբեր մեթոդների կիրառմամբ հերկայացնել այդ նյութը և հնարավորության սահմաններում որոշ ճշտումներ մտցնել տարբեր երկրների հետ միջնադարյան Հայաստանի առևտրատնտեսական կապերին առնչվող հարցերում։

Հայաստանի վաղմիջնադարյան քաղաքներում ներքին առևտուրը համեմատաբար թույլ էր զարգացած և իր ինտենսիվությամբ զգալիորեն զիջում էր արտաքին առևտրին։ Դեռևս IV դարում քաղաքային կյանքին խոշոր հարված հասցվեց Շապուհ Բ-ի արշավանքների ժամանակ, երբ անկման եզրին հասան արհեստագործությունը և առևտուրը, որոնց վերականգնման համար պահանջվեց երկարատև ժամանակ և քաղաքային կյանքի նոր վերելք։ Այդ շրջանի ներքին առևտրի վերաբերյալ որոշ վկայություններ պահպանվել են եկեղեցական կանոններում։ Այդ կանոններից մեկում հոգևոր դասին խստիվ արգելվում էր զբաղվել առևտրով, որը համարվում էր աշխարհիկ զբաղմունք։

Երկու հզոր տերությունների՝ Իրանի և Բյուզանդիայի միջև գտնվող Հայաստանը միջազգային տարանցիկ առևտրի կենտրոններից էր։ Հուստինիանոսի կոդեքսում, 408/9 թթ. կայսերական հրովարտակում խոսվում է Բյուզանդական կայսրության և Սասանյան Իրանի միջև կնքած պայմանագրի մասին, ըստ որի Առաջավոր Ասիայում միջազգային առևտրափոխանակությունը թույլատրվում էր միայն սկզբնապես որոշված երեք կետերում՝ Մծբինում (Իրան), Կալլինիկումում (Ռաքքան՝ Եփրատի վրա, Բյուզանդիա) և Արտաշատում (Հայաստան)։ Հետագայում վերջինիս դերը իր վրա է վերցնում Արտաշատից ոչ հեռու գտնվող Դվինը։

Հայաստանի այդ շրջանի առևտրական գլխավոր ճանապարհները նշված են tabula Peutingeriana կոչված քարտեզում։ Ըստ այդ քարտեզի Արտաշատը, իսկ V դարից Դվինը հիմնական ճանապարհներով կապված են եղել Իրանի, Փոքր Ասիայի, Վրաստանի, սևծովյան հյուսիսային և արևելյան նավահանգիստների հետ։ Այստեղ նշված է նաև «Արքայական ճանապարհի» («արքունի պողոտա») Արտաշատ—Տիգրանակերտ հատվածը, որը Չինաստանից եկող «Մետաքսե մեծ ճանապարհի» մասն էր կազմում։

Առևտրական գլխավոր ուղիների վրա գտնվող բոլոր քաղաքները մայրաքաղաքների հետ միասին ակտիվ մասնակցում էին միջազգային առևտրին։ Այստեղ հրստակ առանձնանում էին Թեոդոսուպոլիսը (Կարին), Վաղարշապատը։

V դարից Արշակունիների վերջին մայրաքաղաքը՝ Դվինը, որը հիմնադրվել է IV դ. 30-ական թվականներին, դառնում է տարանցիկ առևտրի խոշոր կենտրոն, հետագայում՝ հայ մարզպանների, արաբ ոստիկանների և մահմեդական ամիրաների նստոց, շուրջ չորս հարյուր տարի՝ կաթողիկոսի նստավայրը։

Դվինը Հայաստանի մշակութային և տնտեսական խոշորագույն կենտրոններից էր։ VI դարի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին գրում է. «Դուվինը շատ բերրատու երկիր է, ունի բարեխառն օդ և լավ ջուր։ Թեոդոսուպոլսից հեռու է ութ օրվա ճանապարհով։ Այստեղ դաշտերը հարթ են և հարմար ձիավարության։ Միմյանց շատ մոտիկ գտնվող բազմամարդ գյուղերը բնակեցված են առևտրականներով, որովհետև Հնդկաստանից, հարևան Իբերիայից պարսիկների և նույնիսկ հռոմեացիների հպատակության ներքո գտնվող գրեթե բոլոր տեղերից այդտեղ են բերվում ապրանքներ, որոնցով նրանք առևտուր են անում»։

VII դ. Անանիա Շիրակացու կազմած «Մղոնաչափք»-ի տվյալներով Դվինից տարբեր ուղղություններով գնում էր հինգ առևտրական ճանապարհ։ Հյուսիսային ճանապարհը Դվինից ձգվում էր Պարտավի և Դերբենդի վրայով Արևելյան Եվրոպա։ Դեպի արևմուտք ճանապարհն անցնում էր Փոքր Ասիայով մինչև Կոստանդնուպոլիս, հարավարևմտյան ուղին՝ Ռաքքայով Աֆրիկա, հարավարևմտյանը՝ Նախիջևան, Տիզբոն, Պարսից ծոց, արևելյանը՝ Փայտակարան, Կասպից ծով, Միջին Ասիա։ Հայկական միջնադարյան մղոնաչափերը ավելի լայն են ներկայացնում առևտրական ճանապարհները, չսահմանափակվելով միայն վարչական կենտրոններով։ Առևտրական կարևոր ուղիներից մեկը, որը Հնդկաստանի, Բակտրիայի վրայով, Կասպից ծովի հարավային ափերով գալիս էր Անդրկովկաս (Նախիջևան, Դվին, Շիրակ), հիշատակվում է Շիրակացու մեկ այլ երկում։ Այդ ճանապարհով էին ներմուծվում գոհարեղեն և այլ ապրանքներ։

Հետաքրքիր են առևտրական նպատակներով նեստորականների Հայաստան ներթափանցման մասին վկայությունները։ Նրանք վերաբնակեցվեցին Խուժաստանից, որը Սասանյան Իրանի առևտրական և արհեստագործական խոշորագույն կենտրոններից էր։ Նեստորականները մեծ դեր էին խաղում Իրանի սահմաններում։ Բնակվելով Հայաստանում, նրանք, հավանաբար, Դվինում կազմակերպում են իրենց համայնքը և սկսում ակտիվ առևտրական գործունեությունը։ Դվինում ըստ երևույթին իրենց առևտրական համայնքներն ունեին նաև ասորիները, որոնք առևտրի մեջ հմտացած ժողովուրդ էին համարվում Մերձավոր արևելքում և միջերկրածովյան ավազանում։ Այդ համայնքների մասին թեականորեն վկայում են հնագիտական գտածոները՝ մասնավորապես կնքադրոշմները, որոնց կնիքների մի մասը ոչ հայկական ծագում ունի։

Վաղմիջնադարյան Հայաստանի առևտրի կազմակերպման հարցերի վերաբերյալ հետաքրքիր նյութեր են ընձեռում Դվինում հայտնաբերված կավե կնքադրոշմները, որոնք իրենց վրա կրում են տարբեր կնիքների դրոշմներ (աղ. XLVII, 1—6)։ Դրանցով վավերացվում էին պետական նշանակության փաստաթղթեր, նամակագրություններ, ինչպես նաև կնքվում էին առևտրի համար առանձնացված ապրանքային հակերը։ Այդ կնիքները սոսկ պետական չէին, այլև անձնական։ Դվինում գտնված 41 կնքադրոշմներից մի քանիսը կրում են 20-ից ավելի դրոշմներ։ Տարբեր կնքադրոշմների վրա մի և նույն կնիքների բազմաթիվ արտատպությունը ցույց է տալիս, որ միջնադարյան Հայաստանում վաճառականներն ունեցել են իրենց կազմակերպությունները, որոնք, հատկապես անհրաժեշտ էին հեռավոր քարավանային ճանապարհորդության և արտաքին առևտրական գործարքների համար։

Առևտրական կապերի ուսումնասիրության և պարզաբանման ուղղությամբ առանձնապես կարևոր են դրամագիտական նյութերը, մասնավորապես դրամական գանձերը (աղ. XLVIII)։ Ամենավաղ դրամը, որը Դվինում շրջանառության մեջ էր V—VII դդ. սասանյան արծաթե դահեկանն էր, վճարման հիմնական միավորը Առաջավոր Ասիայում։

Դվինում VI դարում շրջանառության մեջ էին գտնվում իրանական 30 քաղաքների փողերանոցների դրամները, բացի այդ, քաղաքի պեղումներից գտնվել են նաև բյուզանդական պղնձե և արծաթե դրամներ, ոսկե դինարներ, որը արտացոլված է նաև գրավոր աղբյուրներում։ Դրամների գտածոներում իր վառ արտացոլումն է գտել Հայաստանի վրայով Արևելքի և Արևմուտքի միջև կատարված միջազգային առևտրի պատկերը։

Հայ-բյուզանդական առևտրադրամային հարաբերությունների առումով առանձնապես հետաքրքիր են Դվինում գտնված ապակե և բրոնզե կշռաչափերը։ Ապակե դրոշմները, որոնցից մեկի վրա կա E տառը, իսկ երկուսի վրա՝ N, ոսկե դրամներ կշռելու էտալոններ են, այսպես կոչված էքսագիաներ (աղ. XLVI, 79)։ Սրանք իրենց քաշով (4,52, 4,52 և 4,40 գրամ) համապատասխանում են բյուզանդական մեկ ոսկե դրամի քաշին (նոմիսմա)։ Բրոնզե կշռաչափերը 2 և 12 նոմիսմա են, որոնք հաստատվում են համապատասխան նշաններով (աղ. XLVII, 7)։ Արաբական տիրապետության սկզբնական շրջանում (VII դ. վերջ և VIII դ. I-ին կես) Հայաստանի դրամական համակարգում էական փոփոխություններ չեն նկատվում։ VIII դ. առաջին կեսից երևան են գալիս խալիֆաթի դրամները և Հայաստանը մտնում է Արաբական խալիֆաթի դրամական հարաբերությունների ընդհանուր համակարգի մեջ։

Արաբական տիրապետության շրջանում (VII դ. վերջ—VIII դ. սկիզբ) Հայաստանի տնտեսական անկումն իր ազդեցությունն է թողնում նաև տարանցիկ

առևտրի վրա։ Հայաստանը այդ շրջանում կորցնում է իր տեղը միջազգային առևտրում։ Սկզբնական շրջանում, Բյուզանդական կայսրության հետ անընդհատ պատերազմների ընթացքում, առևտրական կապերը Արևելքի և Փոքր Ասիայի միջև խափանվեցին։ Տարանցիկ առևտրի խզումը անդրադարձավ նաև հայկական քաղաքների վրա, որոնք տնտեսական անկում ապրեցին և վերածվեցին ռազմավարչական կենտրոնների։ Սակայն Դվինը մնաց որպես գլխավոր քաղաք՝ մայրաքաղաք և ինչ-որ տեղ Թեոդոսուպոլիսը, որի արհեստագործական արտադրանքի մասին մեծ գովեստով են խոսում արաբ մատենագիրները (Յակուտ, Յակուբի և ուրիշներ)։ Չնայած արտաքին առևտրում տեղ գտած սահմանափակումներին, այն շարունակվում էր Խալիֆաթի տարբեր երկրների հետ։ Տեղեկություններ կան նաև խազարների հետ առևտրական կապերի մասին։

Առևտրական երթուղիները հնարավոր է դառնում վերականգնել դրամների գյուտերով։ Այդ ճանապարհները, որոնք հիշատակված են արաբական մղոնաչափերում, հիմնականում ունեին ռազմական նշանակություն։

Արաբական մղոնաչափերը կազմվում էին օժանդակելու համար արաբ զինվորականներին և աստիճանավորներին։ Դրանք շատ մանրամասն են. տրված են բոլոր կանգառները և օրվա ճանապարհի երկարությունը։ Բոլոր ուղիները, ի վերջո, հատում էին Արաբական Խալիֆաթի հյուսիսային մարզի վարչական կենտրոններին՝ Դվինին, Պարտավին, Մարաղային, Արդաբիլին։ Բնականաբար, այդ ճանապարհներով անցնում էին ոչ միայն զորքն ու հարկահավաքները, այլև առևտրական քարավանները։

VIII դ. սկզբից Դվինում սկսվում է սեփական դրամի հատումը, որը արաբական մյուս դիրհեմների հետ լայն տարածում է ստանում միջազգային շուկայում։ Հայաստանը, որպես Արաբական Խալիֆաթի պրովինցիաներից մեկը, նույնպես մտնում էր առևտրական կապերի ոլորտի մեջ։ Նույնիսկ եվրոպական երկրների VII—VIII դդ. դրամական գանձերում կան Հայաստանի փողերանոցներում հատված դրամներ (Շվեդիա, Ֆինլանդիա, Դանիա)։ Այդ դրամներից գտնվել են Հին Լադոգայում, Նովգորոդում, Կիևում, Մոսկվայում, Ռյազանում։

VIII—X դդ. Հայաստանում շրջանառության մեջ էին նաև հարևան պետությունների և քաղաքների դրամական միավորները (Իրան, Ասորիք, Թաբարիստան, Ֆարս, Նյուշապուհ, Մերվ, Հերատ, Բուխարա, Սամարղանդ և այլն), որը վկայում է հիշյալ երկրների հետ առևտրի լայն կապերի մասին։ Մեծ տարածում ունեին Բաղդադի և Ռեյի դրամները։ Հայաստանի ներքին առևտրում այդ ժամանակ հիմնականում օգտագործվում էին պղնձե դրամները։

Խալիֆաթի երկրներում, այդ թվում և Հայաստանում, IX դարից սկսվում է արտադրողական ուժերի բուռն զարգացումն ու տնտեսական վերելքը, որն, ի վերջո, հանգեցնում է ֆեոդալական քաղաքի ձևավորմանը, ապրանքային արտադրության ընդլայնմանը, արհեստի անջատմանը երկրագործությունից և ներքին ու արտաքին առևտրի աճին։

Առաջավոր Ասիայում IX դ. փոխվում է նաև քաղաքական իրավիճակը։ Սկսվում է Արաբական երբեմնի հզոր Խալիֆաթի քայքայումը։ Աբբասյանների կենտրոնական իշխանության թուլացումը քաղաքական կյանքի աշխուժացման հնարավորություն է ստեղծում ծայրամասային կիսանկախ իշխանություններում։ Այդ ժամանակ Արևմուտքում ուժեղանում է Բյուզանդական կայսրությունը, որի գլուխ է կանգնում մակեդոնական դինաստիան։ Հյուսիսային Հայաստանում ինքնուրույնություն և թագավորական թագ է ստանում Բագրատունիների նախարարական տունը, որի քաղաքական ձգտումները շատ որոշակի էին։ Հայ Բագրատունի թագավորները ձգտում են կարգավորել երկրի առևտրական և դիվանագիտական հարաբերությունները հարևան երկրների հետ։ Առաջին քայլը Բյուզանդական կայսրության հետ առևտրական պայմանագրի կնքումն էր. IX դ. վերջում հայ վաճառականները հնարավորություն ստացան առևտուր անել սեծովյան նավահանգիստների վրայով (Տրապիզոն, Սինոպ և այլն)։ Մինչև այդ պայմանագիրը հայկական մղոնաչափերում նշվում էր միայն Հայաստանը Փոքր Ասիայի վրայով կայսրության մայրաքաղաքի հետ կապող ցամաքային ճանապարհը, որն անցնում էր Կարին, Երզնկա, Կոնիա, Ամասիա քաղաքներով դեպի Կոստանդնուպոլիս և հետո՝ Հռոմ։

Այսպիսով, X դ. վերջում և XI դարի սկզբում, նոր ճանապարհի վրա գտնվող քաղաքները սկսում են ծաղկել և բարգավաճել։ Ժամանակակիցները հիացմունքով են նկարագրում այն անհաշիվ հարստությունները, որոնք ստանում էին այդ քաղաքները «ծով և ցամաք» առևտրից։

Բյուզանդիայի հետ առևտրի աշխուժացման հետևանքով Հայաստան է ներհոսում մեծ քանակությամբ բյուզանդական ոսկե դրամը, որը լինելով ավելի կայուն վալյուտա, աստիճանաբար դուրս է մղում արաբական դիրհեմը։ Դվինի պեղումների ժամանակ գտնված բյուզանդական ոսկե դրամները հատվել են Կոստանդնուպոլսում։

Բագրատունյաց թագավորության անկումից (1045 թ.) և սելջուկյան արշավանքներից (1048 թ.) հետո, Հայաստանում նկատվում է տնտեսական ժամանակավոր անկում։ Հայերի քաղաքական և տնտեսական կյանքը կենտրոնանում է Կիլիկիայում. XI դ. այստեղ ստեղծվում է հայկական թագավորություն, որը շուրջ երեք դար կարևոր դեր էր խաղում Մերձավոր արևելքում։

Հայերը իրենց նավահանգիստներով և ցամաքային ճանապարհներով ակտիվ մասնակցում էին Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտրին և կապեր ունեին ռուս Հայաստանի և Արևելքի մահմեդական երկրների հետ։ Դրանք վկայվում են տարբեր վայրերում գտնված կիլիկյան դրամներով և արհեստագործական արտադրանքի նմուշներով։

XII դարից Հայաստանում նկատվում է տնտեսական նոր վերելք և քաղաքների հետագա աճ։ XIII դարում Հայաստանի քաղաքները առևտրի և արհեստագործության խոշոր կենտրոններ էին (Դվին, Անի, Կարին, Կարս և այլն)։ Անիի և Դվինի հնագիտական պեղումները, ինչպես նաև գրավոր աղբյուրները վկայում են տարբեր երկրների հետ աշխույժ առևտրի մասին։ Հայտնի են հախճապակու հիանալի անոթներ Իրանի կենտրոններից (Ռեյ, Քաշան, Սուլթանաբադ), չինական ծագում ունեցող սելադոնը, սիրիական ապակին և այլն։ Արևելքի երկրներից ներմուծվում էին թանկարժեք քարեր, ոսկի, համեմունքներ և այլ ապրանքներ։

XII—XIII դդ. Հայաստանի քաղաքներում տեղական և միջազգային աշխույժ առևտրի հետևանքով առանձնանում է առևտրական և վաշխառուական կապիտալը ներկայացնող մեծահարուստների («մեծատունք») մի խավ։ Նրանց հարստության, դրամական խոշոր գործառնության, հողակտորների առուծախի, եկեղեցիների նվիրատվության մասին են հաղորդում ճարտարապետական հուշարձանների վրա պահպանված վիմագիր արձանագրությունները։ Մեզ են հասել այդ ժամանակվա առևտրական աշխարհի և ֆինանսական վերնախավի ներկայացուցիչների անուններ, որոնցից կարելի է հիշատակել Պարոն Ումեկին, Սահմադինին, Տիգրան Հոնենցին և ուրիշների։

XII դ. վերջից Վրաստանի հետ կապված աշխույժ առևտրի հետևանքով նկատվում է վրացական դրամների մեծ հոսք Հայաստան։ Հաճախ են հանդիպում Թամարի և Ռուսուդանի պղնձե դրամները։ Հայ-վրացական կապերը հետևանք էին քաղաքական այն իրադարձության, որ ստեղծվել էր Հայաստանի մի մասի ազատագրումից երկու ժողովուրդների ռազմաքաղաքական համագործակցության հետևանքով։ Այն գլխավորում էին Զաքարյանները։

* * *

Միջնադարյան Հայաստանում առևտրի հիմնական կանոնները արտացոլում են գտել Մխիթար Գոշի դատաստանագրքի համապատասխան հոդվածներում։ XII դարում ստեղծված դատաստանագրքի շատ հոդվածներ իրենց մեջ արտացոլել են այն վիճակը, որը տիրում էր երկրում ավելի վաղ ժամանակներում և ավանդաբար անցել էր զարգացած ֆեոդալիզմի շրջանին։ Նույնը վերաբերում է նաև առևտրի կազմակերպմանը։

Քաղաքներում առևտուրը երկրի գերագույն սյուզերենի մենաշնորհն էր և կատարվում էր գերագույն իշխանության միջոցով։ Տեղերում առևտրին հսկում էին նախարարները, որոնք այն կարգավորում էին քաղաքներում և այլ բնակավայրերում։ Նախարարների պարտականությունների մեջ էր մտնում նաև վաճառվող ապրանքների չափ ու կշիռների հաստատումը։ Պետության ողջ տարածքում սահմանվում էր միասնական մաքս, որը գանձվում էր միայն առևտրի վայրում բերված ապրանքի վաճառքից հետո։

Ներքին և միջազգային առևտուրը պետք է ունենար իր կազմակերպությունը՝ շուկան։ Միջնադարում առևտրական խոշոր միջոցառումների տեսակներից մեկը շուկա-տոնավաճառներն էին, որոնք անցկացվում էին նախօրոք որոշված ժամանակ և որոշակի տեղերում։ Տոնավաճառները լինում էին տեղական և միջազգային նշանակության։ Տեղական նշանակության տոնավաճառները, ուր հավաքվում էին հարևան քաղաքների և գյուղերի բնակիչները, անցկացվում էին ամեն շաբաթ կամ ամիս։ Այսպես, Անդրկովկասի խոշոր քաղաքներից մեկում՝ Պարտավում, տոնավաճառները կազմակերպվում էին յուրաքանչյուր կիրակի։ Այնտեղ հավաքվում էին վաճառականներ ողջ Անդրկովկասից և հյուսիսային Իրանից։ Արաբ աշխարհագիր Իստահրին գրում է. «Բերդայի (Պարտավի) դարբասի մոտ, որը կոչվում էր «Քրդերի դարբաս», կա «ալ-ջյուրքի» (հայերեն «Կիրակի» բառից) անունով շուկա, մեկ փարսախ քառակուսի տարածքով։ Այստեղ յուրաքանչյուր կիրակի հավաքվում են մարդիկ։ Այս շուկան ավելի մեծ է «Քուվ-սերևից»։ Պարտավի կիրակնօրյա տոնավաճառներին մասնակցում էին նաև հայ վաճառականները։

Միջազգային նշանակության տոնավաճառները կազմակերպվում էին ոչ հաճախ, բայց ավելի երկարատև՝ շաբաթով, ամսով։ Տարին մեկ անգամ մեծ տոնավաճառ էր կազմակերպվում Սև ծովի ափին՝ Տրապիզոնում, ուր ժամանում էին վաճառականները Բյուզանդիայից, Իրանից, Ասորիքից, նաև Հայաստանից։

Մեծ քաղաքներում, որպես կանոն, գլխավոր շուկայից բացի կային ավելի փոքր շուկաներ, որոնք մասնագիտացված էին արհեստավորական արտադրանքի և գյուղատնտեսական մթերքների առանձին տեսակների վաճառքի համար։ Շուկայի ներսում յուրաքանչյուր ապրանք վաճառվում էր որոշակի տեղերում։ Դրանք ամբողջական շարքեր էին կամ առանձին կուղպակ-խանութներ։ Վիմագրական նյութերից գիտենք, որ Անի քաղաքում գոյություն ունեին արհեստավորական և առևտրական մասնագիտացված շուկաներ, փողոցներ և թաղամասեր։ Կային շուկաներ անասունների և բամբակի վաճառքի համար, դարբինների փողոց և թաղամաս, գործվածքի վաճառքի շարքեր։

Միջնադարյան քաղաքական մասնատվածության, հաճախակի պատերազմների, ավազակային հարձակումների պայմաններում, առանձին վաճառականների ուղևորությունը դժվարին էր և վտանգավոր։ Այդ նպատակով անհրաժեշտություն էր ծագում միավորել վաճառականներին որոշակի խմբերով, քարավանների համալրման ասպարեզում ունենալով իրենց ներքին կարգուկանոնը։ Քարավանի գլուխ կանգնում էին պաշտոնական անձինք, որպես կանոն հարուստ վաճառականները, որոնք իրենց ձեռքի տակ ունեին բազմաթիվ պաշտոնյաներ (գործակատար, գրագիր, նոտար և այլն)։ Յուրաքանչյուր քարավան ուներ իր ներքին սովորություններն ու ավանդույթները։ Վաճառականները վարձում էին ուղեկցողներ և պահակախումբ։ Կազմակերպված քարավանները, անկախ ազգային պատկանելությունից և դավանանքից, օգտվում էին իշխանությունների հովանավորությունից և նույնիսկ պատերազմական գործողությունների ժամանակ անարգել շարունակում էին իրենց ուղին։

Առևտրական քարավանի անձեռնմխելիությունը, հավանաբար, այն ժամանակվա միջազգային հարաբերությունների մեջ ամենանպատակահարմար ձևն էր։ Նույնիսկ այնպիսի ռազմատենչ տիրակալներ, ինչպիսիք մոնղոլական խաներն էին, սերտ կապերի մեջ էին առևտրական կապիտալի ներկայացուցիչների հետ և նրանց հովանավորում էին։ Վաճառականների կազմակերպությունը գործունեություն էր ծավալում նաև տեղերում։ Որպես կանոն նույն քաղաքից եկած, նույն ազգությամբ և դավանանքով մարդիկ բնակվում էին քաղաքի կամ բնակավայրի որոշակի մասերում, հիմնականում, քաղաքային պարիսպներից դուրս։ Այնտեղ նրանք ունեին իջևանատուն, պահեստային շինություններ, վարձում էին պահակախումբ։

Եթե առևտուրը տվյալ քաղաքի հետ կրում էր մշտական բնույթ, ապա ամենակարևոր առևտրական ավանները վերածվում էին վաճառականների մշտական ապրելատեղի և կազմավորվում էին առևտրական գաղութներ։ Վաճառականների և քարավանների կարիքները հոգալու նպատակով, ճանապարհների և լեռնանցքների վրա կառուցվում էին հատուկ քարավանատներ և հյուրանոցներ։ Քաղաքներում նույնպես եկվոր վաճառականների համար կառուցվում էին հյուրանոցներ, որոնց քանակը և չափերը պայմանավորված էին տվյալ քաղաքի որպես առևտրական կենտրոն խաղացած դերով։ Այդտեղ նախատեսվում էին բոլոր պայմանները մարդկանց և քարավանների ապրելու ու հանգստի համար, կային հատուկ պահեստային բաժանմունքներ և կրպակներ առևտրի համար։

Անիում պեղվել են մի քանի այդպիսի շինություններ։ Երկուսը, որոնք ամենամեծն են և հարուստ հարդարված, գտնվում են քաղաքի առևտրական մասի կենտրոնում, ոչ հեռու «Գլխավոր փողոցից», կենտրոնական դարպասների մոտ։

Դվինի քաղաքային թաղամասերից մեկում մասնակի պեղված է մի մեծ հասարակական շինություն, հնարավոր է քաղաքի կենտրոնական շուկան։ 36 սյուներ ունեցող այդ շինությունը (4 շարք) վաղմիջնադարյան մոնումենտալ ճարտարապետության կարևոր կոթողներից է։

* * *

Հայաստանի արտաքին առևտրի մի շարք հարցերի պարզաբանման համար հարուստ նյութեր են տալիս միջնադարյան հուշարձանների պեղումները։ Հատկապես Անիից և Դվինից գտնված նյութերի մեջ առանձնանում են գեղարվեստական խեցեղենը և ապակին։ Պեղումները տվել են տեղական և ներմուծված ապակյա իրերի հազվագյուտ նմուշների մի հավաքածու, որն իր բազմաքանակությամբ պատմական մեծ արժեք է ներկայացնում, ընդլայնում է մեր պատկերացումները Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի ապակեգործության մասին IX—XIII դդ.։

Հայաստանում ապակեգործությունը շատ խոր արմատներ ունի։ Վաղ ապակու նմուշները հայտնի են մ. թ. ա. II—I հազ. դամբարաններում և ուրարտական հուշարձաններում։ Ապակեգործությունը բարձր զարգացման է հասնում անտիկ ժամանակաշրջանում (Գառնի, Արտաշատ)։

Միջնադարյան ապակեգործությունը շարունակում է անտիկ արտադրության լավագույն ավանդույթները։ Այդ են վկայում վաղմիջնադարյան ապակու գյուտերը Դվինից, Հացավանից, Այգեվանից, Գառնիից։

Հայ և օտար աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ վկայություններ Հայաստանում ապակեգործության զարգացման մասին։ Առաջին անգամ այն վկայված է Ագաթանգեղոսի մոտ Հռիփսիմեի վարքի նկարագրության մեջ։ Բազմաթիվ են հիշատակությունները տարբեր անոթների և սպասքի վերաբերյալ։ Հետաքրքիր են միջնադարյան հայ ձեռագրերում պահպանված տվյալները ապակու բաղադրության մասին։ Հայաստանը ապակու հումքի հարուստ հանքավայրեր ուներ։ Այդ մասին արժեքավոր վկայություններ են պահպանվել բյուզանդական և արաբական աղբյուրներում։ Հիշատակություններ կան նաև ներմուծված ապակու վերաբերյալ։ Այսպես, Սմբատ Բագրատունի թագավորը արաբ ամիրային նվիրում է բյուգանդական ծագում ունեցող գունավոր ապակե անոթներ։ Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ հայոց Կատրանիդե թագուհին Հնդկաստանից բերել է տալիս շատ թանկ գնահատվող բյուրեղապակյա մի ջահ, որը զարդարում էր Անիի Կաթողիկե տաճարը։

Միջնադարյան Հայաստանի ապակեգործության հոչակավոր կենտրոններից էր Դվինը։ Դվինի ապակեղենի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ոչ միայն առանձնացնել տեղական ապակեգործության նմուշները, այլև պարզել նրա զարգացման պատկերը։ Դվինում V—VI դդ. պալատական շինության պեղումների ժամանակ բացվել են ապակեգործական արհեստանոցի մնացորդներ։ Այնտեղ մեծ քանակությամբ գտնվել են արտադրական խոտան, լուսամուտի ապակիների ու զամպարների բեկորներ և այլն։ Ապակու քիմիական անալիզը ցույց է տվել օբսիդաքարի և դոլոմիտի լայն կիրառություն բաղադրության մեջ։ IX—XIII դդ. Դվինում գործում էին մի քանի արհեստանոցներ, որոնց արտադրանքը հատկանշվում էր բնորոշ գծերով, ոճական և տեխնոլոգիական առանձնահատկություններով, կապված ապակու տարբեր բաղադրությունների հետ։

Դվինի IX—XIII դդ. ապակուն բնորոշ է ալյումինի մեծ պարունակությունը։ Հավանաբար դա կապվում է տեղական հումքի հետ։ Հայկական ապակու համեմատությունը վրացականի և մերձավորարևելյանի հետ ցույց է տալիս, որ վերջիններիս մեջ շատ քիչ է ալյումինը։

Ապակե անոթների արտադրության վայրի որոշումը, հատկապես քիմիական անալիզի միջոցով, լուրջ դժվարություն է ներկայացնում կապված արհեստավորների տեղափոխումների հետ մեկ երկրից մյուսը։ Այդպիսի վկայություններ են պահպանվել Մերձավոր արևելքի երկրներում բնակվող արհեստավորների վերաբերյալ։ Այդ վարպետները իրենց հետ բերում էին ոչ միայն ավանդույթները, այլև հումքի հիմնական մասերը։ Այդ պատճառով տարբեր երկրներում գտնված ապակիների բաղադրամասերը իրար շատ նման են։

Արհեստավոր վարպետները, հմտորեն օգտագործելով հին ավանդույթները և տեղական հումքը, ստեղծել են բարձրարվեստ առարկաներ։ Ապակեղենը հաստատուն տեղ էր գրավել քաղաքացիների կենցաղում։ Տեղական բարձրորակ ապակու առկայության պայմաններում Դվինի բնակիչները, հատկապես վերնախավը, ձեռք էին բերում և պահում իրենց տներում Իրանի, Ասորիքի, Բյուզանդիայի հոչակավոր ապակեգործ վարպետների պատրաստած գեղարվեստական սպասքը։

Դվինի VI—XIII դդ. ապակու ժողովածուն իր մեջ ընդգրկում է այդ երկրներից բերված հիանալի առարկաներ, որոնք հաստատում և հստակ ուրվագծում են առևտրական ուղիները։

Դվինի պեղումներից գտնված ներմուծված ապակու ամենահին և լավագույն նմուշները պատկանում են Իրանի վարպետների արտադրանքին։ Այդ առարկաները (հիմնականում կենցաղային) ներկայացված են տարբեր ձևերով, բայց պատրաստված և հարդարված են նույն տեխնիկայով։ Դրանք հաստ, կիսաթափանցիկ ապակե թասեր են, որոնք կրում են տաշված տարբեր զարդեր (աղ. I—II)։ Նույն թասերից պատրաստված են նաև տեղում, սակայն դրանք տարբերվում են իրենց մշակումով։

Ներմուծված անոթների հաջորդ խումբը ներկայացված է գլանաձև բաժակներով, որոնք Առաջավոր Ասիայում լայն տարածում ունեին IX—X դդ. (աղ. IV, VI—XIII, XIV, 3—9, 11—12)։ Մասնագիտական գրականության մեջ դրանք հայտնի են որպես Իրաքի «աբբասյան արհեստանոցների» արտադրանք (Բաղդադ, Սամառա) և արտահանվում էին։ Նման բաժակներ են գտնվել Միջին Ասիայում (Աֆրասիաբ, Կուլդոր թեփե, Ղարաբուլաղ), Հյուսիսային Կովկասում և նույնիսկ՝ հյուսիսային Եվրոպայում (Բիրկա—Շվեդիա)։ Որպես կանոն այդ բաժակները գտնվել են աբբասյան դրամների հետ։ Հնագիտական գրականության մեջ հայտնի, լայն տարածում ստացած այդ գլանաձև բաժակները կրում են բազմապիսի փորագիր զարդեր, կլոր բլթակներ, նշաձև և ռոմբաձև զարդեր և այլն։ Դվինի կենտրոնական թաղամասում վերջին տարիների պեղումներից գտնվել են նոր նյութեր, այդ թվում փորագիր զարդերով գլանաձև բաժակներ։ Դրանց մեջ ուշագրավ են 1977 թ. գտնված բուսական և երկրաչափական ճոխ զարդերով բաժակները (աղ. VII, VIII, X)։ Դրանցից մեկը կրում է արաբերեն արձանագրության հատված՝ «շուրբ-ըմպելիք» (աղ. XIII)։

Դվինի ապակու ժողովածուում կա մի թաս՝ պսակի եզրին արաբերեն արձանագրությամբ։ Դժբախտաբար թասը փշված է կաղապարի մեջ, որի պատճառով արձանագրությունը անընթեռնելի է, սակայն հնարավոր է քուֆի գրով մոտավորապես ճշտել ժամանակը և պատրաստման վայրը՝ Հյուսիսային Միջագետք, IX դար (աղ. XII)։

Դվինից հայտնի ապակե անոթների խումբը ներկայացված է վերին մասում լայնացող իրանով, համեմատաբար բարակ պատերով, թափանցիկ ապակուց բաժակներով (աղ. XVI—XVIII)։ Բաժակների հարդարանքը հարուստ է և դրանք կարելի է դասել թանկարժեք և հազվագյուտ անոթների շարքը։ Ապակու ժողովածուներում դրանք հազվադեպ են հանդիպում։ Նման բաժակներ հայտնի են Սամառայից։

Միջազգային ապրանքափոխանակության նմուշներ վաղուց համարվում են հաստ պատերով փոքր սրվակները, որոնք մեծ քանակությամբ գտնվում են միջնադարյան քաղաքների և ամրոցների պեղումներից։ Այդ սրվակները ունեն ամուր նստած հատակ և նեղ վիզ։ Դրանք պատրաստվում էին կաղապարի մեջ և լրացուցիչ մշակվում սառը վիճակում (աղ. XV)։ Այդ անոթները շատ հարմար էին անուշահոտ յուղեր և օծանելիք տեղափոխելու ու պահպանելու համար։ Սրվակների ձևերի, ապակու որակի և հարդարանքի համեմատությունը ասորական և եգիպտական (Ֆուստատ) նույնա-

3—1643

նման անոթների հետ մեզ համոզում է, որ դրանք կարելի է համարել ներմուծված։ Հավանաբար աղբյուրներում այդ անոթներն են հիշատակվում, որոնք վաճառվում էին Ասորիքի և Եգիպտոսի շուկաներում դեղանյութերի և անուշահոտ յուղերի պահպանության համար։ Անտարակուսելի է, որ IX—X դդ. Հայաստանը աշխույժ առևտրի մեջ էր Խալիֆաթի քաղաքների՝ Բաղդադի, Սամառայի հետ և ապակի հիմնականում ներմուծվում էր այդ քաղաքներից։ Անիի և Դվինի նյութերը ցույց են տալիս, որ ներմուծումը շարունակվել է նաև XI—XII դարերում։

Դվինի ժողովածուի մեջ կա երկկանթանի, անգույն, հաստ ապակուց սկահակ, որի ողջ մակերեսը պատած է խոշոր փորագիր զարդերով (աղ. V)։ Նման անոթների զուգահեռները շատ քիչ են։ Մեզ հայտնի է մեկ անոթ կանաչ ապակուց, որը պահպանվում է Կորնինգի ապակու թանգարանում (ԱՄՆ) և վերագրվում է IX—X դարերի իրանական արտադրանքին։

IX—X դդ. նյութերի մեջ հաճախ են հանդիպում սրվակներ և դրանց վզերը (աղ. XX—XXI) պատրաստված են նիստավորման բարդ տեխնիկայով։ Դվինի ժողովածուում կա մեկ ամբողջական անոթ։ Այդ անոթները հանդիպում են Առաջավոր Ասիայում, Սամառա, Ռեյ, Նյուշապուհ, Աֆրասիաբ հնավայրերում։ Հատկապես դրանք շատ են Միջին Ասիայի առևտրաարհեստավորական նշանավոր քաղաքներից մեկում՝ Նուլրուկում։

Դվինի հավաքածուում առանձնանում է տանձաձև իրանով մի սափոր հաստ բյուրեղապակուց (աղ. XIX)։ Անոթը հիշեցնում է մետաղական ձևերը, որոնք մասնավորապես հայտնի էին նախորդ դարաշրջաններից։ Նույն անոթից գտնվել է Նյուշապուհում (Բեռլինի թանգարան)։ Երկու անոթներն էլ պատրաստված են միևնույն արհեստանոցում և թվագրվում են IX դարով։

Դվինի կենտրոնական թաղամասի IX դարի շերտերի նյութերում առանձնանում է գունավոր ապակուց, նեղ բերանով ձվաձև մի անոթ, որի իրանը նկարազարդված է։ Պահպանված է թռչնի, հավանաբար արծվի մի պատկեր, որը իր ճիրաններում պահում է զոհին։ Պատկերների մեջ արված է քուֆի արձանագրություն, որը մաղթանք է։ Զուգահեռներ այս անոթին չկան (աղ. XXVIII, XXVIII a)։

Այդ նույն հատվածում 1980 թ. գտնվել են երեք բաժակների բեկորներ բարակ թափանցիկ ապակուց, գունազարդված և արձանագրություններով։ (աղ. XXIII, 28, 29, XXIV, XXIV a)։ Առաջին բաժակի իրանը նկարազարդված է դեղին և դարչնագույն գույներով։ Բուսական զարդի մեջ պատկերված է ինչ-որ ֆանտաստիկ կենդանի։ Ապակու վրա ներկով գրված է արձանագրություն, որը ընթերցվում է հատվածաբար («հանուն ալլահի... եղբայր»)։ Երկրորդ բաժակից պահպանվել է բուսական զարդով փոքրիկ բեկոր, որի վրա պահպանվել է հինգ տառ՝ «...Նրանց մեջ ....»։ Երրորդի զարդը քառաթերթ ծաղիկներ են, թերթերը արված կանաչով։ Պսակի վրա արված արձանագրությունը նույնպես կարդացվում է հատվածաբար։

Գունազարդ այս բաժակների զուգահեռները քիչ են հանդիպում։ Նման մի բաժակ ցուցադրված է Մոսկվայի Պետական պատմական թանգարանում՝ «Ոսկե Հորդայի XIII—XIV դդ. առևտրական կապերը» ցուցափեղկում։ Բաժակի գտնվելու վայրը անհայտ է, թվագրությունը՝ ոչ ճիշտ։ Ավելի մոտ զուգահեռներ հայտնի են VIII—IX դդ. նյութերում (Ասորիք, Եգիպտոս)։ Նույն նկարազարդումով բաժակ հայտնի է Մետրոպոլիտեն թանգարանի ֆոնդերից (ԱՄՆ), որը թվագրվում է IX դարով. գտնում են, որ ծագում է Եգիպտոսից։

Այս նույն խմբի մեջ է մտնում նաև ծալված շուրթով խորը թասը, որը պատրաստված է բարակ թափանցիկ ապակուց և նկարազարդված է դեղին, շագանակագույն և կանաչ գույներով։ Զարդը հորիզոնական չորս մասի է բաժանվում։ Ամենավերևում արձանագրությունն է, երկրորդ գոտին պատած է բուսական զարդով՝ երրորդը՝ արձանագրությունն է։ Չորրորդ գոտին զարդարված է շեղանկյունիներով և կետերով։ Անոթի հատակին նույնպես արձանագրություն է և արևի ու լուսնի խորհրդանշանը (աղ. XXV, XXV a)։ Նույն ապակուց հայտնի է Դվինի նախորդ տարիների պեղումներից, սակայն խիստ բեկորային են (աղ. XXVI, XXVII)։

Ապակիների նկարազարդման տեխնիկան ավանդաբար համարվում է եգիպտական արհեստանոցի արգասիք, IX դարից այն անցնում է Առաջավոր Ասիա և XI—XIII դդ. լայն տարածում է ստանում բյուզանդական և ասորական արհեստանոցներում։ Այդ արհեստանոցներում, դեռևս անտիկ շրջանից Եգիպտական ավանդույթներով արծնը (эмаль) զուգակցում էին ոսկու հետ։ Այս տեխնիկայի զարգացման և կատարելագործման հետևանքով երկու հարյուրամյակում Երևան են գալիս առանձին դպրոց-արհեստանոցներ իրենց բնորոշ հատկանիշներով և գեղարվեստական ոճի առանձնահատկություններով։ Առանձին դեպքերում ապակու նկարազարդումը հասնում է բարձրարվեստ արտադրանքի։ Այդ դպրոցների բնորոշ գիծը ոչ թե անոթների ձևն է կամ նյութը, այլ՝ գեղարվեստական ոճը, նկարազարդման տեխնիկայի և հարդարանքի մանրամասները։ Արհեստանոցների մի մասը մասնագիտացված էր միայն նկարազարդման ուղղությամբ, իսկ ապակե անոթները պատրաստվում էին այլ արհեստանոցներում։ Այդ պատճառով էլ, ոչ թե անոթի ձևը, այլ հարդարանքի ոճն է որոշում նկարազարդված անոթների պատրաստման կերպը։ Ասորական քաղաքների մեջ Ռաքքան բոլորից շուտ յուրացրեց նկարազարդված ապակու արտադրությունը։ Այդ արհեստանոցների նկարազարդման ոճը, ի տարբերություն Հալեպի (XII դ.) և, հետագայում՝ Դամասկոսի (XIII դ.),

այքի էր ընկնում իր հոխությամբ և ոսկու մեծ պարունակությամբ։ Դվինի կենտրոնական թաղամասում գտնված նկարազարդված ապակիների ամբողջ խումբը թվագրվում է IX դարով և իր տեխնիկայով հիշեցնում է ասորական արհեստանոցների արտադրված ապակին, մասնավորապես Ռաքքայի հռչակված վարպետների արտադրանքը։

Ռաքքան (Նախկին Կալլինիկումը) գտնվում էր Եփրատ գետի ափին և առաջավորասիական առևտրի կարևոր կենտրոններից էր։ Այն հայտնի էր շուկայով, արհեստավորական արտադրանքով, հատկապես ապակու արտադրությամբ։

Ըստ հայկական մղոնաչափքի, առևտրական աշխույժ ճանապարհներից մեկը անցնում էր Դվինից Երուսաղեմ, Միջերկրական ծով և այնուհետև՝ Հյուսիսային Աֆրիկա։ Այդ ուղին անցնում էր Հայաստանի հարավային քաղաքներով՝ Մանազկերտ, Խլաթ, Նփրկերտ, Համիգի մոտ դուրս էր գալիս Տիգրիս գետը և Հալեպով ու Դամասկոսով շարունակվում էր դեպի հարավ։ Միջնադարում դա հաղորդակցության կարևոր ուղիներից մեկն էր։ Այդ ճանապարհով էին տարվում հավաքած հարկերը Խալիֆաթի մայրաքաղաք Դամասկոս, անցնում էին զինվորական և դիվանագիտական ջոկատները, Մեքքա էին գնում մահմեդականները, Երուսաղեմ՝ քրիստոնյաները։ Այդ ճանապարհով մշտապես շարժվում էին առևտրական քարավանները։ Միջազգային առևտրում այդ մայրուղին շատ կարևոր դեր էր կատարում և պահպանում իր նշանակությունը Արաբական Խալիֆաթի տիրապետության շրջանում (VIII—IX դդ.) և հետագա՝ X—XIII դարերում։ Ճանապարհի վրա տեղադրված քաղաքների ներքին կյանքը բավականին կայուն էր։ Դրանք բազմամարդ էին, բարեկարգ և ունեին լավ շուկաներ։

Դվինում և Անիում գտնվել են Ռաքքայի (IX դ.), Հալեպի (XII դ.) և Դամասկոսի (XIII—XIV դդ.) հռչակված վարպետների ապակու արտադրանքի նմուշներ։

Հետաքրքիր էին Դվինից և Անիից գտնված բյուզանդական ապակյա իրերը։ Այդ գտածոները մեծ նշանակություն են ձեռք բերում ոչ միայն առևտրական կապերի վերականգնման համար, այլև հնարավորություն են ընձեռում քննարկել բյուզանդական արհեստային արտադրանքի, մասնավորապես ապակեգործության զարգացման մակարդակը։

Դվինում գտնվել են մոզաիկ ապակու հիանալի թասեր և բեկորներ, որոնք Արևմուտքում, մասնավորապես Իտալիայում տարածում ունեին IX—X դդ.։ Դրանցից երկուսը ոչ խորը թասեր են, պատրաստված «միլլեֆիորի» (հազարաթերթիկ) տեխնիկայով (աղ. XXIX, 37), ապակին հաստ է և խուլ։

Թասերից մեկը գտնվել է միջնաբերդում XI դ. բյուզանդական դրամների և կապույտ, թափանցիկ ապակուց գլանաձև մի անոթի հետ, որի վրա արված են «Թռչունի փետուր» անվանվող զարդը (աղ. XXXIII)։

1953 թ. Դվինի միջնաբերդի սենյակներից մեկում գտնվեց կապույտ բարակ ապակուց մի սրվակ, որի ողջ մակերեսը նկարազարդված է ոսկով և դեղին, կանաչ կարմիր արծնով։ Անոթն ունի գնդաձև իրան, նեղ վիզ, և օղակաձև նստուկ։ Իրանի վրա տեղադրված են մեծ ու փոքր շրջաններից կազմված չորս մեդալյոններ, որոնց կենտրոններում պատկերված են մարդիկ և կենդանիներ։ Մեդալյոններից մեկի վրա պատկերված է ծալապատիկ նստած մարդկային ֆիգուրա։ Նա կրում է երկար թևերով աղատ զգեստ։ Մարդը ձախ ձեռքում բռնել է ջութակը, աջում՝ աղեղը։ Երկրորդ մեդալյոնի վրա պատկերված է աջ թաթը վերև պարզած առյուծ, երրորդ մեդալյոնից պահպանվել է մի փոքրիկ հատված։ Մեդալյոնների արտաքին գոտու մեջ պատկերված են վեց թռչուններ, որոնց միջև արված է բուսական զարդ։ Անոթի մնացած մակերեսը ծածկված է բուսական և երկրաչափական տարբեր զարդերով։ Սրվակը բյուզանդական ապակեգործների, մեզ հասած բարձրարվեստ արտադրանքի հազվագյուտ նմուշներից է։

Գիտության համար ոչ պակաս հետաքրքրություն ունի ջութակով մարդու պատկերը։ Դա համարվում է ջութակի ամենահին վերարտադրությունը։ Նրա հորիզոնական դիրքը, ձախ ձեռքով բռնելու ձևը, հենելով կզակին՝ արևմտյան երաժիշտներին հատուկ բնորոշ գիծ է, այն դեպքում, երբ Արևելքում աղեղնավոր գործիքները նվագելու ժամանակ բռնում էին ուղղահայաց դիրքով։

Մասնագետների որոշմամբ աղեղնավոր գործիքները Արևմուտքում հայտնի էին IX դարից։ Անոթի վրա պատկերված գործիքը պայմանականորեն կարելի է ջութակ անվանել, քանի որ այն շատ է տարբերվում ժամանակակից գործիքից։ Ջութակի իրանը ավելի լայն է, դեկան՝ կարճ և ունի երեք աղեղ, սակայն դեկայի վերջում վերարտադրված է չորս ականջ (колок)։

Իրականում, մենք այստեղ ունենք ժամանակակից ջութակի նախատիպի հազվագյուտ վերարտադրություն։ Ոճական և տեխնիկական տվյալներով այս անոթը թվագրվում է XI դարով։

Անիի բազմամյա հնագիտական պեղումները երևան բերեցին քաղաքի առևտրաարհեստավորական կարևոր դերը Հյուսիսային Հայաստանի քաղաքների շարքում։ Ն. Մառի և նրա աշակերտների պեղումները ցույց տվեցին, որ Անիի առևտրական և արհեստավորական կյանքի կենտրոնը նոր քաղաքն էր, որն առաջացել էր միջնաբերդի պաշտպանական պարիսպներից դուրս։ Այնտեղ էին գտնվում առևտրական տները, շուկաները, հյուրանոցները, որոնք տեղադրված էին միջնաբերդից դեպի քաղաքային նոր պարիսպների (Սմբատաշեն) գլխավոր մուտքը ձգվող կենտրոնական փողոցի («Բուն փողոց») վրա։ Այս փողոցի վրա գտնվում էին և այլ

բնույթի կառույցներ՝ եկեղեցիներ, մզկիթներ, բաղնիքներ և այլն։

Միջնադարյան այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք Անին ու Դվինն էին, կենտրոնական շուկայից բացի կային նաև հատուկ մասնագիտացված փոքր շուկաներ։ Այսպես, Քեյ-Սուլթան Շեղդադյանի 1198/9 թթ. արձանագրությամբ, Անիում բամբակի, բամբակե գործվածքի և բրդի վաճառքը թույլատրվում էր միայն Աբուլ-Մա'ամրան մզկիթի հրապարակում։ Քեյ-Սուլթանի հայրը՝ Աբուլ-Սուարը, որը Դվինի ամիրան էր և հարուստ վաճառական Անին կանխիկ գումարով գնում է սելջուկներից։ Անիի բնակիչները աշխույժ առևտուր էին անում Բյուզանդիայի հետ։ Հայաստանի պետական պատմական թանգարանում պահվում է Անիի պեղումներից հայտնաբերված բյուզանդական ապակու մի փոքրիկ ժողովածու։ Ներմուծված ապակյա այս թանկարժեք առարկաները գտնվել են քաղաքի պալատական համալիրում, հարուստ քաղաքացիների տներում և տաճարներում։

Ժողովածուում կան երկու ամբողջական անոթ։ Մեկը մուգ մանուշակագույն թափանցիկ ապակուց սրվակ է, ձգված իրանով, փոքր կլոր հատակով և երկար վզով։ Այն գտնվել է 1907 թ. միջնաբերդի պալատի հանդիսասրահներից մեկում (աղ. XLIII, 7)։ Երկրորդ անոթը կաթնագույն ապակուց ձագարաձև ղամպար է, իր վրա կրում է հորիզոնական շրջանաձև ակոսներ և կապտավուն ցայտեր (աղ. XLII)։ Դրանք դրվում են հատուկ շրջանակի մեջ և կախվում ջահերից։ Ժողովածուում կան երկու կիսագնդաձև թասեր, բեկորներ, որոնք զարդարված են ոսկով, արծնով և նույնպես կարող են ղամպարի մասեր լինել։

Պալատական համալիրում գտնված անոթների մեջ մեծ քանակություն են կազմում բյուզանդական կենտրոններից ներմուծված ապակե անոթների բեկորները։ Դրանք իրենց վրա կրում են արծնով և ոսկիով արված բուսական, երկրաչափական և կենդանական տարբեր պատկերներ (աղ. XLIII)։

Այսպիսով, Անիում և Դվինում գտնված XI դարի վերոհիշյալ ապակե անոթները, իրենց մեջ միավորում են այն բոլոր հատկանիշները, որոնք հատուկ են բյուզանդական ապակեգործական արհեստանոցներին։ Դրանք են մշակվածությունը, մոտիվները, ոճը, ոսկով և արծնով զարդարելու տեխնիկան և այլն։

Թեև գրավոր աղբյուրների բազմաթիվ հիշատակություններ կան Բյուզանդիայում ապակեգործության բարձր աստիճանի մասին, սակայն մինչև վերջերս շատ քիչ էին այն գտածոները, որոնք ծագում էին այդ հսկայածավալ կայսրության սահմաններից։ Վերջերս պեղվել են ոսկով և արծնով գունազարդված ապակիների արտադրության արհեստանոցներ, որոնցից ամենամեծը ուսումնասիրված է Դավիդսոնի կողմից Կորընթոսում։

Վերջին երկու տասնամյակներում բյուզանդական ապակի է հայտնաբերվել Հին Լադոգայում, Նովգորոդում, Տուրովում, Խերսոնեսում։ Հատկապես հետաքրքրքրական են Նովգորոդոկում գտնված բյուզանդական ապակե անոթները։ Նման անոթներ հայտնի են Պաֆոս ամրոցից (Կիպրոս, Ա. Մեգաուի պեղումները), որոնք հարդարանքով և անոթների ձևով մոտ են Նովգորոդոկի անոթներին։ Այդ գտածոներով գիտությանը հայտնի դարձան լավ փաստագրված բյուզանդական ապակե անոթների առանձին ժողովածուներ։ Բյուզանդական ապակու մասին դատում էին մինչ այս գյուտը միայն սբ. Մարկոս տաճարում պահվող, Կոստանդնուպոլսից բերված միակ հայտնի սկահակով, Ֆուստատից (Եգիպտոս) գտնված մի քանի բեկորներով, որոնք հաստատում էին Թեոֆիլի տրակտատում գունավոր ապակիների պատրաստման տեխնիկայի նկարագրությունը XI դարում։

Ներկայումս վերը հիշատակված ապակու այս խմբի անոթների առատության պայմաններում, կարելի է մանրամասն խոսել այդ առարկաների գեղարվեստական և տեխնիկական առանձնահատկությունների մասին, ճիշտ բնութագրել ոճը, բացահայտել բյուզանդական ապակեգործության տարբեր դպրոցների և արհեստանոցների ու տեղական առանձնահատկությունները։

Անիի կիսագնդաձև թասերն իրենց զուգահեռներն ունեն Հին Լադոգայից, Նովգորոդոկից և Կիպրոսից գտնված նյութերում։ Դվինի ջութակահարի պատկերով սրվակը շատ ընդհանուր գծեր ունի Կորնթոսի արտադրանքի հետ։ Հնարավոր է, որ Նովգորոդոկի և Կիպրոսի անոթները պատրաստված լինեն մեկ արհեստանոցում։

Բյուզանդական ապակե անոթները, դրամների հետ մեկտեղ, հնարավորություն են ընձեռում որոշել առևտրական ուղիները և կայսերական առևտրի տարածման արեալը։

Խազարների պետության մայրաքաղաք Սարկելի պեղումների ժամանակ գտնված ապակե ապարանջանների գյուտերը հանգեցրել են հետաքրքիր դիտողությունների այդ քաղաքի առևտրական կապերի մասին X—XI դարերում։ Սև ապակուց պատրաստված ապարանջանները Սարկել են բերվել Անդրկովկասի քաղաքներից՝ հիմնականում Դվինից, այն դեպքում, երբ նկարազարդված և մոզաիկ ապարանջանները ծագում են Խերսոնեսի և Կորնթոսի բյուզանդական արհեստանոցներից։

Միջնադարյան մղոնաչափերում հիշատակվում են դեպի հյուսիս ընթացող ևս երկու ճանապարհ։ Մեկը Դվինից, Բջնիի վրայով, Աղստև-Հունան գետի կիրճով դեպի Թիֆլիս, մյուսը՝ Անիից Լոռիով Դմանիս։ Վրաստանից Հայաստան էր ներմուծվում խեցեղեն առարկաներ և ապակե անոթներ։ Հարկ է նշել, որ Վրաստանում IX—XIII դդ. ապակեգործությունը ամենատարածված

և դարգացած արհեստներից մեկն էր։ Պեղումների տվյալները ցույց են տալիս բազմաթիվ ապակեգործական արհեստանոցների առկայություն, որի բարձրորակ արտադրանքը իրացվում էր ներքին շուկայում և արտահանվում հարևան երկրներ։

Դվինի նյութերում գտնվում է թափանցիկ ապակուց, բարձր ոտքով մի հիանալի գավաթ, զարդարված վերադիր, նուրբ թելերով և դեղին ու կարմրադարչնագույն կոճակներով (աղ. XL)։ Ինչպես հայտնի է, նման անոթներ պատրաստվել են Ռուսթավիում։

Ուշագրավ են անոթների երկու բեկորներ, նկարազարդված տարբեր գույնի էմալով (աղ. XXVII, 16, 17)։ Դրանց մոտ զուգահեռներ հայտնի են վրացական Օրբելթի քաղաքի ապակեգործական արհեստանոցների նյութերում։ Վրացական ծագում ունեն նաև Դվինում գտնված մուգ-դեղին ապակուց երկու թասեր։

XIII դարի 30-ական թվականներին Հայաստանին ծանր հարված հասցրին մոնղոլները։ Հետագա դարերում Հայաստանն անընդմեջ պատերազմների թատերաբեմ էր, որի հետևանքով երկիրը ապրեց քաղաքական և տնտեսական անկում, ավերվեցին ծաղկուն քաղաքները և գավառները։ Սկսվում է քաղաքային բնակչության՝ արհեստավորների և առևտրականների զանգվածային արտագաղթը երկրից։

Միջին և Առաջավոր Ասիայում ստեղծված քաղաքական իրադրության նոր պայմաններում, միջազգային առևտրում սկսեցին կարևոր դեր խաղալ Թուրքմենիայից Խորեզմ, հսկե Հորդայի քաղաքներով դեպի Բալթիկ ծով տանող հյուսիսային ճանապարհները, որը նույնպես ծանր հետևանքներ ունեցավ հայկական քաղաքների համար։

Առևտուրը հիմնականում կենտրոնացավ հայկական գաղթավայրերում, որոնք ստեղծվեցին Դերբենդում, Տրապիզոնում, Ղրիմում, Հյուսիսային Կովկասում, Լվովում և այլուր, որոնք գտնվում էին առևտրական ուղիների վրա։